ՆՈՐ-ԴԱՐ

№ 180 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Չորեքշաբթի 7 Նոյեմբերի 1884 Չորեքշաբթի 7 Նոյեմբերի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 180

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ. գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութեան մի տողը բառէն 2 կ. ռեկլամների համար՝ կրկնապատիկ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ
Թիֆլիսում
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 1885 ԹՈՒԱԿԱՆԻՆ
ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ, և ԾՐԱԳՐՈՎ
(Երկրորդ տարի)

Ծրագիր

I. Տէրութեան կարգադրութիւններ։
II. Առաջնորդող յօդուածներ-առօրեայ ամեն տեսակ խնդիրների մասին։
III. Քրոնիկոն — լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, պատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ։
IV. Թղթակցութիւններ — Կովկասից, Ռուսիայից և միւս երկիրներից։
V. Քաղաքական — Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր։
VI. Խառն Լուրեր։
VII. Հեռագիրներ։
VIII. Առևտրական տեղեկութիւններ։
IX. Խմբագրական պատասխաններ։
X. Բանասիրական — Ֆէլիէտօններ, պատկերներ, զրոյցներ, վէպեր, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատութիւններ և քննադատական յօդուածներ։
XI. Յայտարարութիւններ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Խմբագիր—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

Ծանօթ. „Նոր-Դարի“-ի խմբագրութիւնը անցեալը երբև փորձ ընդունելով իւր կողմից ոչինչ խնայելու չէ առաջիկայում ամենօրեայ թերթի բաժանմունքները կարելոյն չափ աւելի ճոխացնելու և պակասը լրացնելու։ Մնում է միայն, որ ընթերցող հասարակութիւնը բաժանորդ գրուելով աջակցէ նրան գործի յաջողութեանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase) Rédaction „Nor-Dar“։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — † Ներսէս Պատրիարք։
Քրոնիկոն. Լուրեր։ Դիսցիպլինայի պակասութիւնը մեր մէջ։
Թղթակցութիւններ.—Սղնախից և Լոռուց։
Քաղաքական. Լուրեր։ Խառն Լուրեր։ Հեռագիրներ։
Առևտրական Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս 6 Նոյեմբերի 1884

† ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ.

Հոկտեմբերի 26-ին, ուրբաթ կէսօրին, ՚ի Տէր հանգուցեալ Կ. Պոլսի պատրիարք Ներսէս սրբազանը ծնուել է Կ. Պոլսում, Խասգիւղ կոչուած քաղաքամասում, 1837 թիւ յունվարի 28-ին։ Նրա հայրը մի համեստ վարժապետ էր, ազգանունը՝ Վարժապետեան։ Խասգիւղի Ներսէսեան կոչուած վարժարանում իւր սկզբնական ուսումն ստանալով երիտասարդ Վարժապետեանը հետևեց իւր հօրը և պարապում էր ուսուցչութեամբ և միևնոյն ժամանակ աշխատում էր ընթերցանութեամբ դպրոցի պակասը լրացնել և իւր միտքը զարգացնել, որովհետև այն ժամանակուայ դպրոցները շատ համեստ ծրագիր ունէին։ Իւր կնոջ մահից յետոյ երիտասարդ Վարժապետեանը վճռում է աբեղայ դառնալ և երիտասարդական վառ եռանդը կրծքում ուզում է բարձրանալ, անուն վաստակել։ Ադրիանուպօլսում այնտեղի առաջնորդ Արիստակէսի ձեռքով երիտասարդ Վարժապետեանը 1858-ին վարդապետ է ձեռնադրվում և ընդունում է Ներսէս անունը։ 1862-ին Ներսէս վարժապետը աւելի յայտնի է դառնում Զէյթունում ծագած մէկ վէճի առթիւ։ Նա ուղևորվում է Սիս, որպէս զի քննէ այնտեղի կաթողիկոսութեան գործերը, և այդ ժամանակը նա Սսոյ հանգուցեալ Կիրակոս կաթողիկոսից եպիսկոպոս է ձեռնադրվում. այդպիսով դառնում է նա Սսոյ միաբան և եպիսկոպոս։ Յետոյ Ներսէս եպիսկոպոսը կրօնական ժողովի մէջ կարևոր տեղ է բռնում, որ և ուղարկվում է Եգիպտոս մի կարևոր կտակի խնդրի համար։ Այդտեղ նա այդ գործի մէջ Նուբար-փաշայի հետ յաջողութեամբ գործը վերջացնելով, ստանում է այդ վերջինից 5,000 ոսկի գումար, որ և այդ գումարով Կ. Պոլսում բացվում է Նուբար-Շահնազարեան դպրոցը։ 1866-ին, Գէորգ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, Թիւրքիոյի հայերի կողմից Ներսէս եպիսկոպոսը իբրև պատուիրակ և ջերմ Գէորգական մասնակցում է ընտրութեանը ս. Էջմիածնում և յետոյ Խրիմեան սրբազանի պատրիարքութեան ժամանակ նա 1870-ին Նիկոմիդիոյ առաջնորդ է ընտրվում և մի երկու տարի առաջնորդութեան պաշտօն կատարում։

1872-ին Ներսէս եպիսկոպոսը հանգանակութեան համար գալիս է Կովկաս և պտտում է զանազան քաղաքներ, ինչպէս Ախալցխա, Ալէքսանդրապօլ և այլն։

Որովհետև ՚ի Տէր հանգ. Գէորգ կաթողիկոսը հակառակ է Սսոյ կաթողիկոսութեան, բնականաբար խեթ աչքով պէտք է նայէր Ներսէս եպիսկոպոսի վերայ, որովհետև սա Սսոյ մէջ ձեռնադրուած եպիսկոպոս էր և Սսոյ միաբան։ Ներսէս եպիսկոպոսը վճռվում է իւր եպիսկոպոսութեան վաւերացումն ստանալ ամենայն հայոց կաթողիկոսից։ Նոյն 1872-ին Ներսէս եպիսկոպոսը ս. Էջմիածնայ տաճարում ծնկաչոք համբուրում է Գէորգ Դ-ի ձեռքը և ուխտում է ս. Էջմիածնի հաւատարիմ միաբան լինել, որով և կաթողիկոսը նրան եպիսկոպոսութեան մէջ վաւերացնում է։

Այնուհետև բացվում է Ներսէս եպիսկոպոսի համար դէպի Կ. Պոլսի պատրիարքութեան աթոռը տանող ճանապարհը։ Թրքահայոց սահմանադրական օրէնքով Սիս ձեռնադրուած եպիսկոպոսը կարող չէ պատրիարք դառնալ, այլ պէտք է դրա համար ս. Էջմիածնում ձեռնադրուած լինի։

Երբ Խրիմեանը իբրև վարդապետ և քարոզիչ իւր գեղեցիկ և համակրելի ընդունակութիւնների և յատկութիւնների հետ հանդերձ, չը կարողանալով վարչական ընդունակութիւն պահանջող պատրիարքութեան պաշտօնը վարել, հրաժարուեցաւ պատրիարքական պաշտօնից, Ներսէս սրբազանը 1874 փետրվարին պատրիարքական տեղապահ ընտրուեցաւ և յետոյ նոյն 1874-ի ապրիլի 26-ին պատրիարք հրատարակուեցաւ։

Տասը տարի շարունակ պատրիարքութեան ժամանակ Ներսէս սրբազանի կատարած գործերի մասին մենք ոչինչ չենք կարող ասել, որովհետև այդ տարիները արտաքոյ կարգի տարիներ էին ոչ թէ միայն Թիւրքիայի հայերի այլ և ամբողջ Թիւրքիայի համար։

Պատրիարքութեան այդ տասը տարուայ գործունէութեան մասին միմիայն այն ժամանակ կարելի է մի որոշ բան ասել, երբ բոլոր գործերը ամենայն կերպ լուսաբանուած, փաստերը ստուգած և լուրջ համեմատութեան և քննութեան առնուած են։ Թրքահայոց սահմանադրութեան հիմանց վերայ Ներսէս պատրիարքը կոչուած էր իբրև պատրիարք Թրքահայերի շահերը պաշտպանելու և ազգին վերաբերեալ ամեն գործերին միջնորդ լինելու Բ. Դրան առաջ։ Թիւրքիան ինքը արևելեան պատերազմից ճգնաժամի մէջ լինելով, Թրքահայաստանի հայերի վիճակը աւելի անտանելի էր դարձել։ Ներսէս պատրիարքը ամեն ջանք գործ դրեց Թրքահայաստանի վիճակը բարւոքելու մասին մերթ Սուլթանի, մերթ եւրոպական մեծ տէրութիւնների ներկայացուցիչներին միջնորդելով։

Խոստացեան բարենորոգումներ մտցնելու — Թրքահայաստանում։ Այդ բարենորոգումները մինչև օրս էլ Բ. Դուռը դեռ չէ մտցրել Թրքահայաստանում, և այդպիսով մեծ տէրութիւններին տուած խոստումը դեռ չէ կատարել։ Թէպէտև Ներսէս պատրիարքը, իւր գործ դրած աշխատանաց հակառակ չը կարողացաւ տեսնել բարենորոգումների կատարումը, բայց դրա իրագործուելու յոյսը այնքան քաղցր էր Թրքահայերի համար, որ դրանով Ներսէս պատրիարքը հայերի մէջ ամենաժողովրդական և ամենասիրելի անձը դարձաւ։ Ժողովուրդը իրաւունք ունէր նրան սիրելու և պէտք է սիրէր, քանի որ նա իբրև արթուն հովիւ իւր վերայ էր առել Թրքահայերի բարօրութեան գործը։

Սոյն 1884-ին, ինչպէս յայտնի է, Ներսէս պատրիարքը ընտրուեցաւ կաթողիկոսութեան առաջին կանդիդատ, և որովհետև ընտրութիւնից առաջ հրաժարուել էր նա այդ կոչումից, ուստի այդ ընտրութիւնը օրինաց հիմանց վերայ անվաւեր հրատարակուեցաւ։

Ներսէս պատրիարքը բացի հայերէնից գիտէր և ֆրանսերէն լեզուն, և բաւականին ազատ խօսում էր այդ լեզուով։ Նրա երկասիրութիւնից դժբաղդաբար մեր ձեռքը ոչինչ չէ հասել, բայց այդ մասում, ինչպէս ասում են, նա մի աչքի ընկնող բան չէ շինել։

Ազգին սիրելի ՚ի Տէր հանգուցեալ Ներսէսի անցեալի մասին աւելի տեղեկութիւններ չ'ունենալով, շատանում ենք նրանով, ինչ որ այս անգամ հաղորդում ենք։

Պատմութիւնը ինչ վճիռ էլ որ դնելու լինի Ներսէսի անձի և նրա կատարած գործերի մասին, այսքանն այժմս հաստատ է, որ Ներսէսը իւր ժողովրդի բարին է ցանկացել և իւր կարողութեան չափ աշխատել է նրա համար, որ նա գիտացել է գրաւել ժողովրդի սիրտը։ Զարմանալի բաղդաւոր աստղի տակ է ծնուել Ներսէսը և աւելի բաղդաւոր աստղի տակ իւր երկրաւորը կնքել, թողնելով տխրած ժողովրդի սրտում բարի և ազնիւ զգացումներով լի յիշատակ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պ. Մուրացանը գրում է մեզ. Չը նայելով որ ես մի քանի ամիս առաջ „Նոր-Դար“-ի միջոցաւ արգելել էի իմ „Ռուզան“ անունով պիէսայի ուրիշ քաղաքներում ներկայացնելը, այսուամենայնիւ յիշեալ թերթի 178 համարում տպուած մի լուրից իմանում եմ, որ ամսոյս 1-ին այդ պիէսան ներկայացրուել է արդէն Երևանում, պ. Սաֆրազեանի և տիկ. Ալմայի մասնակցութեամբ։

Թէ ինչու համար պարոնը առանց իմ յօժարութեան ներկայացրել է այդ պիէսան, չը գիտեմ, բայց այդ մասին նրանից հաշիւ պահանջելը մօտիկ ապագային թողնելով առ այժմ անհրաժեշտ եմ համարում կրկին անգամ յայտարարել ընթերցող հասարակութեանը, որ այդ պիէսայի ներկայացնելը—առանց կանխաւ ինձանից իրաւունք առնելու—ես արգելում եմ այսուհետև առանց բացառութեան, ինչ քաղաքում և ինչ խմբի միջոցաւ էլ որ լինի, հիմնուելով հեղինակի իրաւունքի վերայ։

Գետաշէնի ուսուցիչ Զաքարիա Զալինեանցը մեզ գրում է. „Նոր-Դար“ պատուական թերթի անցեալ համարներից մէկում Շամշադինից մի լուր է եղել գրուած, երբ տեղական ուսուցիչներից մէկը, Գէորգ Զալինեանց ազգանունով, ձի և յիսուն րուբլի փող է առնում գիւղացիներից և անյայտանում։

Այդ լուրը արատաւորում է մի քանի Զալինեանցների անունները։ Նա մանաւանդ մի քանի պարոններ անգիտութեամբ այդ լուրը ինձ են վերագրում, քանի որ միայն ինձ են ճանաչում Զալինեանց ազգանուամբ։

Ուստի յայտնում եմ այդ պարոններին, որ ես ոչ Գէորգ Զալինեանցն եմ և ոչ Գէորգը (միւս Զալինեանցների հետ) իմ ազգակիցս է։

ՍՂՆԱԽԻՑ. Սղնախում բէգարա։—Ընթերցող, ո՞վ է իմացել կամ լսել, որ քաղաք տեղերում բէգարա (պարտաւորեալ անվարձ ծառայութիւն) լինի, բայց այստեղ կայ։ Ահա ինչպէս։ Այստեղի քաղաքական վարչութիւնը երբեմն ստիպում է բնակիչներին իրենց տների առաջի թէ յետևի տեղերը խճակելու և ծուռ տեղերը հարթելու։ Այդ կարգադրութեանը մենք հաւանում ենք, եթէ միայն խօսքը իրենց սեփական տեղերի մասին է. իսկ եթէ հասարակաց է և քաղաքային տեղ կարելի է համարել, կարծեմ դրա համար որոշած կայ մի գումար, որը իւրաքանչիւր տարի հաւաքվում է բնակիչներից նոյնպէս հարկաւորութեանց մասին գործ դնելու համար։ Երբեմն էլ ինչ հարկ կայ ստիպելու, որ բնակիչները իրենց ծախսով շինեն։

Այդպիսի ժամանակներում ունեւորը կարողանում է մշակներ վարձել, իսկ չունեւորը ի՞նչ պէտք է անէ, կարծիք չը կայ որ ստիպուած ինքը պէտք է մշակութիւն անէ։ Անցեալ շաբաթին մի օր ես ականատես եղայ մի փողոցի վերայ ինչպէս վարձած մշակները գետինը դրստում էին, իսկ միւս փողոցի վերայ երեխայք, աղջիկերք և պառաւ կանայք մշակում էին։ Մօտեցայ մի պառաւ կնոջ, որ գանգատվում էր՝ „պարոն, այս ի՞նչ նոր կարգադրութիւն է, արդէն պառաւել եմ և այսպիսի բան չեմ տեսել, որ քաղաքի կանանց էլ ստիպեն քաղաքի պատկանեալ գետինը մշակելու. սա ի՞նչ քաղաք է, երբ գիւղացու նման „բէգարա" են դուրս կանչում. ունեւորը աղա մշակներ է վարձել, իսկ ինձ պէս չունեւորը այսպէս պէտք է տանջուի հա՜, բայց եթէ ես էլ տանը չը լինէի, չէ՞ որ իմ տանս մէջ գտնուած միակ նշնելու աղջիկս պէտք է ստիպէին մշակութիւն անելու. բայց ի՞նչ պատիւ կը լինէր մեզ համար. դուք հասկացողներ էք, ինչո՞ւ ձայն չէք հանում"։ Ի՞նչ կարող էի պատասխանել, քանի որ կնոջ ասածը ուղիղ էր։

—

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ պ. Մագաթիա Աւալեանցից իւր Փրանսերէնից թարգմանած Արսէն Հուսէի ,,Նւայն աղջիկերքը'' անունով ողբերգական-վիպասանական գիրքը, երկու մասից բաղկացած և միասին կազմած։ Գիրքը տպուած է Թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանի տպարանում. թուղթը և տիպը մաքուր են. 338 երեսից բաղկացած գրքի գինն է միմիայն՝ 1 րուբլի։ Այդ գիրքը շատ դիւրըմբռնելի է և ամենին մատչելի զուարճութեամբ կարդացվում է, և ինչպէս երեւում է թարգմանիչը մեծ աշխատանք է գործ դրել արդի գրական լեզուի պարզութեան և ճոխութեան վերաբերութեամբ։

Շատ լաւ կանէր պ. Մ. Աւալեանցը. եթէ պարապ ժամերում ժողովրդին մատչելի, ընթերցանութեան համար ընտիր գրքեր թարգմանէր։

—

Մեզ հաւաստացնում են, որ Պարսկաստանի առաջնորդ է նշանակուած հայր Ճերմակեանը. միայն յայտնի չէ մեզ թէ Պարսկաստանի ո՞ր մասի համար։

—

Մեզ գրում են, որ ամսոյս 1-ին ,,Խաթաբալա'' կոմեդիայի ներկայացմանը թատրոնը գրեթէ լիքն է եղել։ Այս ժամանակներում այդ նոր երեւոյթ է, որովհետև մենք դերասաններից անդադար գանգատներ էինք լսում թէ օգուտ չունին և ստիպուած են դատարկ թատրոնում ներկայացում տալու։

Այդպիսի յաջողութիւնից յետոյ՝ պ. Տէր-Գրիգորեանը իւր կնոջ՝ տ. Փաշայեան Տէր-Գրիգորեանի հետ միասին գնում են Երեւան, այնտեղ մի քանի ներկայացումներ տալու նպատակով։

—

ՇԱՄԱԽԻՑ մի հեռագիր, որի ստորագրութիւնը պարզ չէ, մեծ ցաւ է յայտնում Ներսէս պատրիարքի տարաժամ մահուան առիթով։

—

ԿԱՂԶՄԱՆԻՑ պ. Կաչկաչեանցը նոյեմբ. 6-ին հեռագրում է մեզ. Երէկ աշակերտին բազմութեան ներկայութեամբ տեղւոյս հայոց դպրոցում կատարուեցաւ 'ի Տէր հանգուցեալ Ներսէս պատրիարքի հոգեհանգիստը։

ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ.

—

Ամեն լուսաւորեալ երկիրներում դիսցիպլինան (կարգապահութիւնը) մի ակնածելի անհրաժեշտութիւն է։ Զինուորական աշխարհը նրա առաջ սիրով խոնարհեցնում է իւր գլուխը։ Ընկերական և պետական հաստատութիւնները իրենց ապահովութիւնը գտնում են նրա մէջ. հասարակութիւնները իրենց անդորրութեամբը, շատ հանգամանքներում, պարտական են լինում նրան. իսկ պատերազմական փառաւոր յաղթութիւնների մէջ առաջին պատիւը դարձեալ նրան է պատկանում։ Դիսցիպլինան ընկերական կեանքի մէջ միացնող և ամրապնդող կապն է. չկա՛յ այդ կապը—և ընկերական կեանքը քայքայուած և ոչնչացած է։

Մեր մէջ, դժբաղդաբար, այդ գեղեցիկ անհրաժեշտութիւնը յարգուած չէ։ Մեր ամենի գործը,—եկեղեցական թէ հասարակական, հարիւրաւոր գլուխներ ունի և հենց այդ պատճառաւ էլ անգլուխ և անտէր է։ Ամեն մարդ մեր մէջ ընտրող է, կառավարող է, հրամայող է, կամ ազատ, անձնիշխան և չհպատակող է։ Բացառութիւն գրեթէ չկայ։

Թողնելով ուրիշ շատ խնդիրները, մասնաւորում ենք մեր խօսքը տեղական հոգեւոր իշխանութեան վերայ։

Դիտե՛ք արդեօք, ինչպէս է վարում նա իւր գործերը և ո՞րքան է կարողանում տարածել իւր իրաւասութիւնը իւր ստորադրեալների վերայ.—'ի հարկէ չգիտէք և կամ շատ քիչ բան գիտէք։ Բայց այդ խնդիրը արժանի է մամուլի շուրջ ուշադրութեանը, որովհետև նա մեր հասարակական կեանքի համար մահու և կենաց խնդիր է։ Որքան էլ որ մամուլը զգուշաւոր լինէր իւր մերկացումների մէջ, որքան էլ անախորժ լինէր նրա համար վարագոյրները բանալ և ոչ—ակնահաճոյ տեսարանը 'ի ցոյց ժողովրդեան դնել, դարձեալ անխուսափելութեան ծայրայեղութիւնը ինքն իրեն երեւան է հանում պակասութիւնները և հրապարակի վերայ է դնում նրանց հեղինակներին։

,,Նոր-Դար''-ի 170 համարի մէջ մի լուր տպուեցաւ մի ինչ որ Ա. Գ. տիրացուի մասին, որին տեղւոյս կոնսիստորիան հրամայել էր հանել հոգեւորական զգեստը, բայց նա այդ հրամանի դէմ ըմբոստանալով՝ դիմել էր ս. Սինոդին, վերջինից ոչ միայն պաշտպանութիւն գտնելու այլ և քահանայական կոչում ստանալու համար։ Լրատուն յոյս էր յայտնում, որ ս. Սինոդը հաւատարիմ կմնայ իւր ուղարկած շրջաբերականի ոգուն և ոչ ոքին քահանայանալու իրաւունք չի տալ մինչև նոր կաթողիկոսի գահակալութիւնը։

Նոյն լրագրի այսօրուայ 176 համարում հանդէս է գալիս մի ուրիշ լրատու և մեծ ցաւ յայտնում՝ թէ ինչո՞ւ համար յիշեալ Ա. Գ. տիրացուի մասին ,,Նոր-Դար''-ի մէջ այդպիսի աննպաստ լուր է տպուել, մինչդեռ նա ,,ամենաարժանաւորներից'' մէկն է. և արդարացնում է նրա ստամբակ վարմունքը նրանով, որ ,,ամենաարժանաւոր'' տիրացուն իւր հոգեւորական զգեստը չէ հանել միմիայն քմահաճութեան (իմա՛ հոգեւոր իշխանութեան) առաջ չխոնարհուելու համար'' և այլն։

Ի՞նչ էք կարծում, այս լուրերը (որոնց նմանները մենք շատ գիտենք) արդէն ապացոյցներ չե՞ն, որ հոգեւոր իշխանութեան իրաւասութիւնը վտանգուած է և այն, իւրեն վերաբերեալ գործերի մէջ՝ պատշաճաւոր դիսցիպլինայի պակասութիւնից։

Մենք մի կողմն ենք դնում այն պատճառաբանութիւնները, որոնց առաջ է բերում պաշտպանող—լրատուն և չենք էլ ուզում հետաքրքրուիլ թէ ո՞վ է այդ տիրացուն, ո՞ր աստիճան ,,ամենաարժանաւոր'' է, ումնից է ստացել իւր տիրացուական աստիճանը և այլն։

Մի հարց միայն։—Արդեօք տեղական հոգեւոր իշխանութիւնը յարմա՞ր է գտնում նրան իւր պաշտօնին։—Ոչ։ Հրամայե՞լ է նրան հանել իւր տիրացուական զգեստը։—Այո։ Ուրեմն գործը վերջացած է։ Նա պէտք է հնազանդուէր։ Ի՞նչ ունի տիրացուն Սինոդի հետ և Սինոդը տիրացուի հետ....*)

Ինչո՞ւ համար վերջինս իրաւունք է տալիս իւրաքանչիւր տիրացուին իրեն դիմելու՝ իւր նշանակած առաջնորդի դէմ բողոքելու համար։

Երբ մի քաղաքում կոնսիստոր կայ և նրան նախագահում է թեմական առաջնորդը, պէտք է որ ուրեմն այդ քաղաքի հոգեւորական գործերի վերայ մի փոքր ազատ իրաւասութիւն ունենայ այդ հոգեւոր իշխանութիւնը։

Երբ սրբազան Սինոդը մի անգամ արժանի է դատել այս ինչ եպիսկոպոսին առաջնորդական աթոռին և հաւատացել է նրան մի նշանաւոր թեմի կառավարութիւնը, պէտք է ուրեմն թոյլ տայ նրան գործել ըստ իւր բարեհայեցողութեան։

Երբ մի թեմական առաջորդից այս ու այն բարեկարգութիւններն են պահանջում թէ եկեղեցւոյ, թէ հոգեւորական դասի և թէ դպրոցների վերաբերութեամբ, պէտք է ուրեմն թոյլ տրուի նրան՝ իւր ձեռնարկած բարեկարգութեանց դէմ ելնող խոչընդոտները անձամբ և ազատօրէն ոչնչացնելու։

Ամեն տեղ և ամեն անկիւնում, ուր որ մի անգամ բարեկարգութիւններ են ներմուծվում, դժգոհներ և ապստամբներ պակաս չեն լինում։ Եթէ իւրաքանչիւր անպէտք և վնասակար պաշտօնեային՝ իւր պաշտօնից արտաքսուելու պատճառաւ՝ թոյլ տրուի բարձր ատեաններում բողոքելու և եթէ այդ բողոքները զանազան դիտումներով ուշադրութեան առնուին և իրենք նորէն պաշտօնի կանչուին, էլ չգիտենք ո՞ւր պիտի մնայ բարեկարգութեանց խնդիրը...

Ի՞նչ դժուար հասկանալու բան է, որ երբ թեմական առաջնորդը հրամայում է այս ինչ տիրացուին՝ հանել իւր հոգեւորական սքեմը, այն ինչ հոգաբարձուին՝ տալ իւր հրաժարականը և այս ինչ վարժապետին կամ ինքնակոչ տեսչին՝ թողնել դպրոցի մէջ իւր պաշտօնը, ուրեմն նա այդ մարդկանց անպիտանութիւնը տեսնելով և եկեղեցւոյ կամ դպրոցի բարին ցանկանալով է անում։ Ի՞նչ մի անձնական հաշիւ կարող է ունենալ առաջնորդը մի որեւէ տիրացուի, հոգաբարձուի և վարժապետի հետ, կամ ի՞նչ խղճով կարող է նա հալածել նրանց, եթէ այս վերջինների գործունէութիւնը համապատասխանում է իրենց կոչմանը։ **)

Բայց ս. Սինոդը բարեհաճում է այդպիսի պաշտօնական մարդկանց բողոքին կարեւորութիւն տալ, պաշտօնական նկատողութիւններ անել առաջնորդին և դեռ դրանով էլ չբաւականանալով՝ նորէն պաշտօնի կանչել այն մարդկանցին, որոնց թեմական առաջնորդը անարժան է դատել իրենց կոչմանը։

Ո՞րն է այս գաղտնիքի պատճառը. արդեօք այն, որ ս. Սինոդը աւելի լաւ է ճանաչում այդ մարդկանցին քան իւր առաջնորդը։ Բայց չէ՞ որ այս վերջինը աւելի մօտ է այդ անձինքներին և նրանց գործունէութեանը։ Ահա այս տեսակ բողոքարկուներին այնքան երես տալն է պատճառ, որ այսօր տեղական հոգեւոր իշխանութիւնը ոչ մի հիմնական բարենորոգութիւն անել չէ կարողանում։ Ամեն մի տիրացուին, քահանային կամ վարժապետին մի նկատողութիւն արած ժամանակ—խնդիրը ծոցից հանում է և Սինոդի անունով սպառնում իւր իշխանաւորին։ Ո՞ւր է տանում մեզ այս դրութիւնը. չէ՞ որ դէպի կորուստ։ Բայց սրբազան Սինոդի անդամները յուսով ենք որ ազգի և եկեղեցւոյ բարեկամներն են և պէտք է որ շտապեն օր առաջ այս անբնական դրութիւնը բարւոքել։ Մենք ինքներս անձամբ կարող ենք դէմ լինել այս ու այն առաջնորդին, բայց սկզբմունքով պարտաւոր ենք հնազանդուիլ ընդունուած դիսցիպլինային. մենք ինքներս պէտք է աշխատենք չթուլացնել այս ու այն պաշտօնեայի իրաւասութեան ոյժը, որպէս զի դրանով էլ մեր սեպհական ոյժը չջլատենք և այդպիսով մեր գոյութիւնը վտանգի չ'ենթարկենք։ Ինչպէս առաջնորդի պարտաւորութիւնն է հնազանդել իւր եպիսկոպոսապետին, այնպէս և քահանայի պարտաւորութիւնն է հնազանդել իւր առաջնորդին, տիրացուն իւր քահանային և այսպէս մինչև վերջը։ Առանց այս օրինաւոր կարգապահութեան ոչ մի բարի գործ երկար տեւել չէ կարող։ ***)

Գ. Տ. Յ.

Թիֆլիս, 1-ին Նոյեմբերի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՂՆԱԽ, 28 հոկտեմբերի. Գաւառական թղթակիցների միակ մխիթարանքը այն է, երբ նրանց գրածները հրատարակելուց յետոյ՝ նոյն տեղի փոքրաթիւ հասարակութեան մէջ ունենում են նշանակութիւն։ Բայց ի՞նչ մխիթարութիւն թղթակցի համար, որ նրա գրածները հաճութեամբ կարդում են, քանի որ նրանք գործնական հետեւանք չունին, այսինքն ում պարտքն էր դրանց վերայ ուշադրութիւն դարձնելու, նա անուշադիր է թողնում։

Ահա այդպիսի դէպքերումն է, որ կարելի է ասել թէ այդտեղ մի մինչը „և" կայ, որ մեզ անյայտ է։ Իսկ ում մասին որ գրվում է, որի հասարակական անօգուտ գործունէութիւնը նկարագրվում է, նա էլ այդ հանգամանքներից օգուտ քաղելով, բոլորովին հանդիստ իւր չարութիւնները եռապատկում է 'ի վնաս հասարակութեան, որովհետև մէկ ու երկու անգամ չէ փորձել, որ իւրեն վերայ գրածները մնում են անուշադիր և առանց հետեւանքի։

Ես իմ ականջովս լսել եմ թէ՝ ինչպէս մէկը յօդուած կարդալուց յետոյ միւսին ասում էր.—„պարո՛ն, ահա, այս բոլորը ձեզ է վերաբերում, դուք ի՞նչ ունէք ասելու սրա դէմ"։ Իսկ միւսը պատասխանում էր վրացերէն՝—„რაც უნდათ დაწერონ, ჩემ ყურებს მაგისთანა ბევრი გაუგია, სიავკაცე იმათ თორემ მე ვერას დამაკლებენ". (ինչ որ ուզում են գրեն, այդպիսի բաներ շատ եմ լսել, վատամարդութիւն իրենց, թէ չէ ինձ ոչինչ չեն պակսեցնում)։ Եւ արդարեւ, այդ խօսքերի մէջ որքան ճշմարտութիւն կայ, քանի որ ինքն էլ համոզուած է, որ ի՞նչ չարութիւն էլ որ գործէ, որքան էլ որ վնաս է եկեղեցւոյն, այնուամենայնիւ իրեն այդտեղից վնաս չը կայ։

Անցեալ տարի, երբ թեմի առաջնորդը այստեղ էր, անձամբ տեսնելով մեր հայոց ուսումնարանի խայտառակ շինութիւնը, այստեղից մեկնելիս մի քանի օր առաջ հրաւիրելով տեղւոյս ժողովրդականներին, նրա վերանորոգութեան մասին յորդոր կարդաց և դպրոցի շինութեան գործը յանձնեց տեղիս մայր եկեղեցւոյ երէցփոխան պ. Ա. Ամիրխանեանցի հսկողութեանը, որին և յանձնեց նուիրատուութեանց մի ժապաւինեալ մատեան։ Սրբազանը իւր ներկայութեամբ ստորագրութիւն բացեց և 180 րուբլու չափ հաւաքեց և այդ գումարը մնաց յիշեալ երէցփոխի մօտ։ Ժողովրդի շատութեան նայելով նուիրատուութիւնը 2,000 րուբլուց էլ աւելի պէտք է անցնէր. բայց այդ միջոցին դժգոհ լինելով երէցփոխից միաձայն կանչեցին՝ ,,մենք մի կոպէկ անգամ չենք ստորագրի մինչև երէցփոխից եկեղեցւոյ շատ տարիներով մնացած եկամտեայ հաշիւները չենք ստանայ..." Այս խօսքերը արտասանելուց յետոյ դուրս գնացին ամենքը. իսկ երէցփոխը, որ ներկայ էր, գոռում էր բարձրաձայն դահլիճից դուրս գնացող ժողովրդականների յետևից՝ ,,հարկաւոր չէ ձեր օգնութիւնը, ես իմ սեպհականութիւնից շինելու եմ"։ Մինչդեռ սրբազանը Սղնախումն էր, յիշեալ երէցփոխը 'ի ցոյց ժողովրդեան մի քանի հազար քար ու աղիւսներ բերել տուեց իւր պատուականների պարտէզի տակոսում և դարսեց եկեղեցւոյ առաջ... Մինչ օրս էլ ածած է այնպէս, իսկ սրբազանի հաւաքած 180 րուբլին պինդ պահեց իւր գրպանումը։

Թող պ. երէցփոխը ցոյց տայ մեզ իւր սեպհական փողով շինած մի բան թէ եկեղեցւոյ և թէ ուսումնարանի օգտի համար և մենք այն ժամանակ կը լռենք։ Մենք նրանից այլ ևս ոչինչ չենք պահանջում, այլ միայն խնդրում ենք, որ շինածն էլ չը քանդէ։ Մի ծառայութիւն, որ կարող էր անել նա եկեղեցւոյն, այդ այն կը լինէր, որ թողնէր իւր պաշտօնը, քանի որ ժողովուրդը նրան չէ ցանկանում։ Խօսքերիս հաստատութեան համար, եթէ կը բարեհաճէք, պատիւ կունենամ ներկայացնելու յարգելի խմբագրին, մեր տարուանից առաջնորդի անունով ուղղած խնդրագրի պատճէնը, յանձնած յանուանէ 200 անձանց ստորագրութեամբ և տեղական դեպուտատներից վաւերացրած, որով խնդրում են յիշեալ երէցփոխին հեռացնելու պաշտօնից և նրա տեղ մի ուրիշին նշանակելու, որի անունն էլ յիշուած է խնդրագրի մէջ, որպէս օգտաւէտ մարդ ճանաչելով։

Այս բոլորը շատ լաւ իմանում է երէցփոխը, բայց չէ ուզում հեռանալ պաշտօնից, ըստ ասելոյն ,,Դիտակի'' պարգևին է սպասում։ Ա՛խ, թող քանի վարձատրեն, գոնէ ժողովրդի հանգիստ պահելու համար և ազատեն միանգամայն մշտական [illegible] *)

ՈՄՆ.

ԼՕՌԻ, 26 հոկտ. Հողի հետ պայքարում է գիւղացին և նրա հետ էլ մեռնում։ Մանաւանդ այժմ երբ գիւղացին ուրիշ պարապմունք չի կարողանում գտնել, ուստի և հողը կազմում է գիւղացու միակ յոյսը և պաշտպանը։ Բայց մի՞թէ դրանով գիւղացին կարողանում է ապրել և իւր ընտանիքը պահպանել։ Այդ միայն կարող էր լինել այն ժա-

---

*) Կարգը պէտք է պահպանուի. տիրացուն պարտաւոր է իւր անմիջական հոգ. իշխանութեան կարգադրութեանը հպատակել, բայց ասել բացարձակ թէ ինչ գործ ունի տիրացուն ս. Սինոդի հետ և սա տիրացուի հետ, այդ սխալ է։ Տիրացուն եթէ անիրաւացի զրկուած է իրեն համարում, բողոքի իրաւունք ունի։ Խնդիրը միայն նրանումն է, թէ ինչ ճանապարհով է ինչպէս պէտք է նա հոգ. իշխանութեան դէմ բողոքէ ս. Սինոդին։

Խմբ.

**) Ընդունելով ձեր պատճառաբանութիւնը, միեւնոյնը կարելի է ասել և ս. Սինոդի վերաբերութեամբ։

Խմբ

***) Մենք ամեն գործում դիսցիպլինայի, կարգապահութեան կողմն ենք և այդ մասին խօսել ենք։ Առաջիկայում այդ մասին մեր դիտողութիւններն կանենք։

Խմբ.

*) Եկեղեցին ժողովրդինն է, ինչո՞ւ են խնդրում, որ մի ուրիշը „նշանակուի" քանի որ „ընտրելու" իրաւունք ունին։

Խմբ.

ժամակ, երբ նա կռնենար այնքան վարելահող, որ իւր տարուայ պաշարը վերցնելուց յետոյ, աւելորդ ցորեանը կը ծախէր և դրանով թէ իւր ընտանիքի մերկութիւնը կը ծածկէր և թէ զանազան ծախսերը կը հոգար։ Այդպիսի դրութեան մէջ գիւղացին իրեն միանգամայն երջանիկ կը համարէր։

Բայց ներկայումս ոչ թէ ստացվում է աւելորդ ցորեան, այլ և ունեցածը չի բաւականանում ամբողջ տարուայ համար։ Բանն որ ներկան այսպէս է որոշել գիւղացու բաղդը, արժէր որ այս նիւթի վերայ աւելի գրուէր մամուլի մէջ և երևան հանուէր գիւղացու դրութիւնը։ Գիւղացին վարում է արքունական և կալուածատէրերի հողը։ Այն գիւղացին, որը վարում է արքունական հողը, նախապէս գիտէ, որ իրեն հասնում է մի որոշեալ տարածութիւն վարելահողի։ Աւելի թշուառ է այն գիւղացու դրութիւնը, որը վարում է կալուածատէրերի հողը, ուստի և խօսքս դրա մասին կը լինի։ Մէկ օրինակ բերելուց յետոյ, ընթերցողը կարող է բոլորը ըմբռնել։ Վերցնենք Լօռուայ փոքր գիւղերից մէկը—Սանահինը։ Բոլոր վարելահողը պատկանում է կալուածատէրերին և վանքին. բայց կալուածատէրը այստեղ էլ որոնելով իւր սեփհական շահերը, իւր վարելահողը տալիս է այն գիւղացուն, որից աւելի շատ կ'օգտուի։

Օգտուողներն էլ հարուստ, փոքր ի շատէ ապահովուած գիւղացին է։ Բայց ինչ անէ այն գիւղացին, որը ոչինչ չունի և զրկուած է մի կտոր վարելահող ունենալուց։ Այդպիսի ընտանիքների թիւը շատ է, որոնց անդամները մեծից փոքր շրջում են մերկ և բոբիկ։ Ուրեմն որտեղից նա կարողանայ վճարել արքունական հարկը, կոռի փողը։ Մի՞թէ յայտնի չէ թէ ինչ վախճան է ունենում գիւղացու համար, երբ նա „աղայից" մի քանի րուբլի պարտք է վերցնում։

Մի քանի րուբլին շուտով կրկնապատկվում է և աղան դուրս է քաշում գիւղացու գոմից իւր աջու ձեռքը—եզը, գոմէշը։

Տեսնենք թէ ինչպէս է վարվում նրա հետ վանքը և վանահայրը։ Բարեկամական յարաբերութեան մէջ լինելով այս կամ այն գիւղացու հետ՝ վանահայրը վանքի բոլոր վարելահողը տալիս է իւր բարեկամ գիւղացուն։ Այսպէս վանքը մի գիւղացու ամբարը լցնում է ցորեանով, իսկ շատերին, ամբողջ գիւղին, զրկում վարելահողից։ Ես կարծում եմ, որ վանքը հաւասարապէս պէտք է նայէ ամեն մի գիւղացու վերայ և օգնէ աղքատին, որի ընտանիքը հացից զրկուած է։ Իսկ այժմ վարելահողը վարում է մի օտար գիւղացի, այն ինչ սանահնեցին զրկուած է վանքի հողից օգտուելուց։

Հետաքրքիր է իմանալ, ինչ է պատճառը, որ սանահնեցին վճարելով այնքան փող, որքան վճարում են օտար գիւղացիք, չեն կարողանում վերցնել վանքի արօտատեղիները, վճարելով նոյնքան տասանորդ, որքան վճարում է օտար գիւղացին, չի կարողանում վարել վանքի վարելահողերը։

Քանի որ վանքը զրկում է գիւղացիներին արօտատեղիներից և վարելահողից, այստեղից հասկանալի կը լինի թէ ինչ աչքով է նայում ժողովուրդը դէպի վանքը և վանահայրը։

Զորավարեցի.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

„National Zeitung"-ին հաղորդում են Փարիզից, նոյեմբերի 7-ից (նոր տում.). „Խոլերային ժամանակի երեւոյթը Փարիզում պաշտօնապէս հաստատվում է։ Մինչև երէկ երեկոյ սուրբ Անտուանի հիւանդանոցում չորս մահուան դէպքեր եղան, Տենօն հիւանդանոցում եօթը խոլերային հիւանդութիւններ եղան, որոնցից երեքը մեռան։ Այս վերջին հիւանդանոցը մտադիր են յատկապէս խոլերայով հիւանդների համար նշանակել։ Քաղաքի զանազան մասերում երէկ տասից մինչև տասներկու խոլերայով հիւանդներ են հետազօտուած։

Ոստիկանութիւնը կարգադրել է մեծ տները հետազօտելու, որոնց մէջ մեծ բազմութիւն է բնակվում. յետոյ օրեկան երկու անգամ պաշտօնական յայտարարութիւն կը հրատարակուի։

Ոստիկանութեան գլխաւորը երէկ ամբողջ օրը այցելեց վարակուած տները։ Ամենալուրջ միջոցներն են ձեռնարկել, որպէս զի արգելք լինեն ժանտախտի տարածուելուն, որը, բժիշկների կարծիքով՝ շուտով պէտք է վերջանայ։ Վերջին ամսուայ միջոցում Փարիզում Cholera nostras-ից հիւանդութիւններ են առաջացել, բայց այդ դէպքերը եղել են փոքրաթիւ և անվտանգ։ Ասիական խոլերայի առաջին դէպքը քաղաքում տեղի ունեցաւ երեքշաբթի երեկոյեան Coquillière փողոցում, Փրանսիական բանկի հանդէպ։ Այդ երեկոյ 21 տարեկան մի երիտասարդ կին, տիկին Բոժետա անունով, վերադառնալով տուն՝ իրեն հիւանդ զգաց, բայց անյապաղ հրաւիրուած բժիշկը նրա հիւանդութեանը մի առանձին նշանակութիւն տուեց։ Մի գիշերուայ մէջ հիւանդի դրութիւնը վատթարացաւ և առաւօտը բժիշկը այցելելով նրան՝ հետազօտեց արագութեամբ տարածուած ասիական խոլերայի դէպքը, որը մի քանի ժամից յետոյ մահով վերջացաւ։ Փարիզի ոստիկանական պաշտօնեաները անյապաղ գործ դրին հարկաւոր միջոցները, բայց և այնպէս ժանտախտը տարածուեցաւ։

—

„Norddeutsche Allgem. Zeit".-ին գրում են, որ Ռումինիայի Կարլոս թագաւորը, իւր որոշման համաձայն՝ նոյեմբերի 2-ին (14) կը վերադառնայ Բուխարեստ, այսինքն ընտրութիւններից երկու օր առաջ։ Ճանապարհին թագաւորը Վիեննայում մի առժամանակ կ'իջևանի։ Այս դէպքին ոչ մի առանձին քաղաքական նշանակութիւն չեն տալիս, ինչպէս որ անցեալ տարուայ աւստրօ-ունգարական թագաժառանգի իւր ամուսնոյ հետ Բուխարեստում և Սինայում այցելութեանը։ Այնուամենայնիւ մտածողներ են լինում այն հանգամանքի վերայ, որ ռումինական թագաւորական զոյգի հետ միասին Վիեննայում կը գտնուեն արտաքին գործերի մինիստր Դիմիտրի Ստուրձը և մինիստր նախագահ Բրատիանուն։ Վերջինս օրերումս Բուխարեստից գնում է Վիեննա, որ թագաւորական զոյգին դիմաւորէ այնտեղ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սարա Բէռնարի գուշակութիւնը. Վիեննայի „Presse" լրագիրը հետևեալ անեկդոտն է առաջ բերում հռչակաւոր դերասանուհու կեանքից։ Փարիզի „Odeon" թատրոնը հռչակաւոր դերասանուհու մեծագործութիւնների առաջին տեղին էր, իսկ նրա դիրեկտորն էր այն ժամանակ „Duquesnel" անունով մէկը, որը պայման առաջարկեց դերասանուհուն ամսական 150 ֆրանկ վարձով։—Մի զրօ ևս աւելացրէք և այն ժամանակ ես կը ստորագրեմ պայմանին"—պատասխանեց գոռոզ դերասանուհին, որ և այն ժամանակ գիտէր իւր ոյժը։—„Այդ անհնարին է, պատասխանեց դիրեկտորը, թերևս մի տասը տարից յետոյ"...—„Տասը տարից յետոյ, պատասխանեց Սարան, ես ամսական 1500 ֆրանկով չեմ համաձայնիլ և այն ժամանակ թատրոնների պ. պ. կառավարիչները իրենք կաղաչեն ինձ։ Գոռոզ գուշակութիւնը կատարուեցաւ և այժմս միևնոյն „Duquesnel"-ը դերասանուհուն ամեն մի ներկայացման համար վճարում է 1,000 ֆրանկ։

⁂

Ութ օրուայ միջոցում 1,880 խնդիր է մատուցուել Փարիզի դատարաններին պսակի լուծման մասին։ Փաստը շատ պարզ է և բացատրութիւններն էլ աւելորդ են։

⁂

Սնանկութիւններ Միացեալ-Նահանգներում. Հետաքրքրելի է հետևել, թէ ինչ աստիճաններով ամերիկական վաճառականութիւնը մօտենում էր առևտրական տագնապին, որը ներկայ տարում սաստիկ հարուած տուեց նրան։ Այդպէս, 1881 թուին 2,886 սնանկութիւններ են եղել, 205,000,000 ֆրանկ գումարի, 1883 թուին—4,637 սնանկութիւններ, 252,000,000 ֆր. գումարի, և վերջապէս ներկայ թուին, մինչև ներկայ ժամանակս, 662,000,000 ֆր. գումարի սնանկութիւններ են յայտարարուել։ Սակայն, չը նայելով այդ կորուստներին՝ Ամերիկան առ ձեռն փողի պակասութեան մէջ բոլորովին նեղութիւն չէ կրում։ Միմիայն Չիկագօում, ներկայ 1884 թուին, զանազան առևտրական և արդիւնաբեր. ընկերութիւններ են կազմուած 5,000,000,000 գումարի։

⁂

Իմաստուն մինիստր. Չինական զօրքը մինչև վերջին ժամանակներս ոչ մի զինուորական նշանազգեստ չէր ճանաչում, և որպէս զի զանազանուէին միւսներից՝ զինուորները իւրենց կրծքի վերայ քառանկիւնի տախտակի կտոր էին կրում, որի վերայ գրուած է լինում „պինգ" (զինուոր) և պատերազմի չաստուածը, որի պատկերը զրած է մինչև այժմ Տա-Կինն տաճարում, Պեկինում, հասարակ զգեստ հագցրած։ Այժմս սակայն եւրոպական վերնազգեստները մտնում է և չինական զօրքերի մէջ, ըստ որում ամեն տեսակի զէնքերը ստացել են իրենց առանձին ձևերը։ Այդպիսի հանգամանքներում վերոյիշեալ տաճարի քրմապետները հարց բարձրացրին, թէ ինչ տեսակ վերնազգեստ պէտք յատկացնել պատերազմին աստուծուն, և այդ առթիւ հարցը քննելու համար դիմեցին ազգային լուսաւորութեան մինիստրին։ Վերջինս հրամայեց՝ աստուծուն առաջուայ հագուստի մէջ թողնել, սակայն տաճարի մէջ կախել նոր վերնազգեստները նրա համար, որպէս զի նա կարողանար իրեն համար ընտրութիւն անելու։

⁂

Բեռլինի և Վիեննայի վիճակագրութիւնից. Բեռլինի և Վիեննայի մէջ 1882 թ. վիճակագրութեան վերաբերութեամբ հետևեալ համեմատութիւնն է անվում։ Վիեննայի ընդհանուր ծախքերը հասարակական շինութիւնների համար հաշվում է 672 000 ֆլօրին, չը հաշուելով դրա մէջ կենդրոնական հրապարակի շինութեան վերայ եղած ծախքերը, որը Վիեննայի քաղաքային վարչութեանը նստել է 672,000 ֆլօրին։ Բեռլինի ծախքերը միևնոյն ժամանակամիջոցում եղել է 792,269 ֆլօրին։ Նոր փողոցներ շինելու համար Վիեննան ծախսել է 700,000, Բեռլինը—2,914,260 ֆլօրին։ Բեռլինի վերայ ընկնող այս ահագին զանազանութիւնը բացատրվում է նրանով, որ նա նշանաւոր թւով փողոցներ է շինել, որ առաջ է եկել պրուսական մայրաքաղաքի ահագին ջրանցքների շինութեան պատճառով։ Փողոցների մաքրելու համար Վիեննան ծախսում է 1,010,000 ֆլօրին։ Այգիները պահելու համար Վիեննան ծախսում է 185,000, իսկ Բեռլինը—195,000 ֆլօրին։ Հրդեհաշէջների համար Վիեննան տարեկան ծախսում է 215,000, իսկ Բեռլինը—693,300 ֆլօրին. քաղաքային ոստիկանատան վերայ Վիեննան ծախսում է 587,000 իսկ Բեռլինը — 1,193,000 ֆլօրին։ Միջնակարգ դպրոցների վերայ Վիեննան ծախսում է 373,000, իսկ Բեռլինը —1,300,000 ֆլօրին։ Ժողովրդի կրթութեան համար Բեռլինը և Վիեննան մօտաւորապէս միաչափ են ծախսում, ամեն մէկը $2\frac{1}{2}$ միլլիօն։ Բեռլինը ընդհանրապէս ունի 128 համայնական դպրոցներ, որոնցում գտնվում են 128 ռեկտորներ, 1289 ուսուցիչներ, 12 ուսուցչի օգնականներ, 665 ուսուցչուհիներ։ Համայնական դպրոցներում ուսանում են 56,000 տղաներ և 58,000 աղջիկներ։ Վիեննան ունի 135 բիւրգերեան ու ժողովրդական դպրոցներ, որոնցում ուսանում են 35,080 տղաներ և 27,232 աղջիկներ. այդ դպրոցներում կան 34 դիրեկտորներ, 97 աւագ ուսուցիչներ, 7 վերակացուներ և մի աւագ ուսուցչուհի։ Ընդհանուր թւով Վիեննայի ուսուցչական խումբը հաշվում է 1,093 ուսուցիչներ և 918 ուսուցչուհիներ. Ի վերջոյ, 1882 թուին Բեռլինը ունէր 1,200,000 բնակիչ, իսկ Վիեննան—միմիայն 800,000 բնակիչ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

5 Նոյեմբերի.

Պետերբուրգ. Երէկ կայացաւ նկարչութեան ակադեմիայի տարեկան ակտը։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը հեռագրով շնորհաւորեց ակադեմիան, որի մէջ արտայայտում էր, թէ հոգով ներկայ է գտնվում տօնախմբութեանը։ Հաշուի մէջ յիշատակվում է, ի միջի այլոց, որ Բարձրագոյն ընծայած գումարով, ակադեմիայի պրօֆէսօրների մասնակցութեամբ նա ձեռք է բերել նոր գեղարուեստ հեղինակութիւններ, պատկերներ է նկարել Րիգայի ուղղափառ տաճարի համար, Մատին լճի մօտ ամառային ապաստանարան է հիմնել ակադեմիայի աշակերտների համար և նրա հոգաբարձու Կօկօրեվը իւր հաշուով նոր ֆլիգել է շինել ապաստանարանի մօտ։ Հաշուից յետոյ ակադեմիայի պատուաւոր անդամ ընտրուեցաւ, Եարոսլաւի արքեպիսկոպոս Յովնաթանը, տնտեսական մասի—խորհրդական Կօկօրեվը և Բօտկինը։

Բագու. Նաւթագործարանատէրերի ժողովը նաւթային խողովակներ շինելը վաղաժամ համարեց, մինչև Անդրկովկասեան երկաթուղին արդիւնաբերութեան պահանջներին բաւականութիւն չի տալ և եթէ նաւթային խողովակ շինուի, այն ժամանակ նա, մենավաճառութիւնից խույս տալու համար՝ կամ պէտք է պետական լինի կամ պէտք է կառուցուի երկաթուղիների հիմնարկութիւնների հիմքերի վերայ. վճռուած է նոյնպէս միջնորդել Անդրկովկասեան բեռնակրութիւնը շուտով աւելացնելու մասին։

Օդեսսա. Այստեղի տեղեկութիւններին նայելով՝ «Սպարտալի» ֆիրմայի սնանկութիւնը Լօնդօնում մինչև 3 միլլ. ֆունտ ստերլինգի է հասնում։ Վերջին ժամանակներս ֆիրման յարաբերութիւններ ունէր ցորենի հետևեալ գրասենեակների հետ. Ազովեան ծովում, Դունայում և գլխաւորապէս Ամերիկայում, որտեղ ահագին վնասներ հասցրուց. Օդեսսայում ֆիրման այժմս միմիայն յարաբերութիւն ունէր Սեւաստօպուլլօյի հետ, որի սնանկութիւնը «Սպարտալի»-ին 100 հազար րուբլուց աւել վնաս պատճառեց։

Ղազան. Կամի գետաբերանի մօտ սառոյց է գնում։

Խարկով. Լեռնային արդիւնաբերների ժողովը վճռեց՝ միջնորդել քարածուխի տարիֆը պակասացնել հեռաւոր տեղեր տանելու համար և աւելացնել մօտիկ տեղեր տանելու համար։

Դագա. Թագաւորը, բանալով ընդհանուր նահանգների ժողովը՝ գահական ճառով յայտնեց օրինագիծը մտցնելու մասին, որի զօրութեամբ՝ ժամանակաւոր կառավարութեան միջոցին սահմանադրութիւնը փոխուել չի կարող, նոյնպէս և անչափահաս պրինցեսայի վերայ խնամակալութեան մասին օրինագիծը։

Կայիրօ. Կասսօյի պետական պարտքի պրօցեսսը եգիպտական կառավարութեան հետ կ'սկսուի նոյեմբերի 13-ին։

Շանխայ. Չինական կառավարութիւնը անգլիական և ամերիկական նաւեր է վարձել Ֆօրմօզա կղզին պաշարելու համար. մօտ 30,000 չինացիներ անցան Եանտցեկիանգ գետով։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի հրապարակի վերայ վաճառահանուող ապրանաց ընթացիկ գները

Նոյեմբերի 6-ին

—

ՑՈՐԵՆ.—Դուռնուկի պուդը	70 կ.
„ Փանձակի „	70 „
„ Շորապալի „	80—85 „
„ Ղազախի „	50—55 „
„ Երևանի „	պակաս.
„ Նուխու „	70 „
ԱԼԻՒՐ.—Բէսօնով 1-ին	12 ր. „
Եղբարց Հախվերդեանցների.	
Կարմիր Նշան.—00-ի.	11 ր. 50 „
„ „ 0	10 — 80 „
„ „ 1	9 — 20 „
„ „ 2	8 — 50 „
„ „ 3	7 — 75 „
„ „ 4	6 — — „
Սև Նշան, աղացած.	
Դուռնուկի պուդը	90 կ.
Փանձակի „	85—90 „
Շորապալի „	90—1 ր.
[illegible]	75—80 „
ԳԱՐԻ.—Սովորական	[illegible]
Սևը	45—50 „
Փանձակի հատիկ	60—65 „
ԲՐԻՆՁ.—[illegible]	2 ր. 60 „
[illegible]	1 „ 30—40 „
[illegible]	1 „ 40 „
ՈՍ.—[illegible]	53 „
[illegible]	1 ր.—05 „
[illegible]	60—65 „
[illegible]	24 „
ԻՒՂ.—[illegible]	12 —
[illegible]	12 —
Ձ.Թ.—[illegible]	15 —
[illegible]	22 կոպ.
[illegible]	4—30
[illegible]	11—40
ՇԱՔԱՐ.—[illegible]	4 „ 5
[illegible]	5 „ 60
ՆԱՒԹ.—[illegible]	55
[illegible]	50
[illegible]	
ՄՈՄ.—[illegible]	11 ր. 90 կ.—12 ր.
[illegible]	10 „ —
[illegible]	10 „ —
[illegible]	11 „ —
ՕՃԱՌ.—[illegible]	5 ր.

„ „ „ 2 ո. „ 3 „ 40 „
„ „ „ 3 ո. „ 2 „ 40 „
„ „ „ Մարմարիօնի 3 ր. 50 „
„ „ „ 1 և կէս փ-ունոց 4 „ 50 „
„ Բայմակուր. և ընկ. գոր.
1 տես. պ. 4 ր. 60 „
2 տես. „ 3 „ 30 „
3 տես. „ 2 ր. 40 „
Մարմարիօնի „ 3 „ 40 „
ԼՈՒՑԿԻ. (ավիչկա) Օսիպովի, Լաշինը 3 „ 90 „
„ Կրեմովի „ 3 „ 80 „
„ Կարմիր 300-անոց „ . 38-50 „
„ Կարբենանի „ 38 „ 50 „
ՇԱՔԱՐ.—Բրօդսկի պ. . . 7 „ 20 „ Թոյլ
„ Գնիվան մեծագլուխ. սպառուած
„ „ մանրագլուխ պ. 8 ր.—7—90 կ.
„ Սաբալօվկայ . . . սպառուած
„ Կտրտած Ռուլադովկա պ. 7 „ — „
„ Փխրուն . . . . 6—90 „
ՇԱՔԱՐԱՒԱԶ.—Օդեսայի պ. . . 5 „ 90—85
Կարամել Շապօշնիկովի
ժեստի արկղում 7 ր. 70 „
„ փայտի արկղում 6 „ 60 „
„ Գօլիակովի
ժեստի արկղ. 7 „ 60 „
„ „ փայտի արկղ. 6 „ 60 „
Մակարօն.— Օդեսայի . պ. 4 „ 40 „
„ „ Սամարայի 5 „ — „
ԿՕՖԷ.—Մօքքօ . . . . . . պ. 21 „ — „
„ Րիօ . . . . „ 14 „ — „
ԿԻՆԱՄՈՆ. (դարչին) . . . „ 10 „ 30 „
ՊՂՊԵՂ.—Սենդափօրի . պ. 16—15 ր. 70 „
ԿՈՃԱՊՂՊԵՂ (կոճ).—Սպիտակը պ. 16 „ — „
„ Մոխրագոյնը „ 13 „ — „
„ Դեղինը „ 6 „ 40—50 „
ՊԱՂԼԵՂ (չիր). . . . . „ 2 „ 15—20 „
ԱՐՋԱՍՊ (Զաջ) . . . . . „ 1 „ 70 „
ԾԾՈՒՄԲ (Քուքուրթ) . . . „ 2 „ 40 „
ԽՈՒՆԿ.—Սպիտակը . . . . „ 10 „ 50 „
„ Սևը . . . . . . „ 6 „ 40 „
ԿԱՆԻՖՕԼ Դեղին . . . . . պ. 2 ր. — „
ՍՕԴԱ . . . . „ 3 „ 20 „
ԿԼԱՅԵԿ . . . . „ 16 „ 20 „
ՕՇԻՆԴՐ (Նաշադիր) . . . . 8 „ 70 „
ՑԻՆԿ (լիստովօյ) . . . . „ 5 ր. 40 „
ՊՈՂՊԱՏ.—Անգլուկը . . . „ 24 ր. — „
ՍՊԻՏԱԿ ԹԻԹԵՂ. (Ժեստ) . „ 16 „ 50 „
ՁԱՄԻՉ (Սալգա) քսակինը պ. . . 2 „ 20 „
„ Անգուկինը . . . . 2 ր. 80 „ Թոյլ
ՆՈՒՇԸ . . . . 11 „ 60—70 „
ԿԱՂԻՆԸ (Թխեղ) . . . պ. 3 ր. 40—45 „
ՇԱԳԱՆԱԿ . . . . „ 1 „ 10—15 „
ԸՆԿՈՅԶ . . . . 90—95 „
ԼԻՄՕՆ 320-հատանոց սնդ. 6 ր. պաշարը շատ
ՆԱՐԻՆՋ.—Եաֆ. . . . . սպառուած
„ Միսսին. . . .
ՕՂԻՆ.—Առանց տակառի . . %ը 8 3/4 կ
ՍՊԻՐՏԸ.— Տակառով . . . . „ 9 1/4 „
ՄՈՐԹ.—Ոչխարի (Մար. համար)
զոյգը 1 ր. 10—15 կ.
„ „ (Օդես. համար) 1 „ 30—40 „
Առևտուրը Թոյլ պաշարը շատ.
„ Այծի (Մար. համար) 1 „ 60—80 „
„ „ (Դաբաղ. համ.) 2 „ 60 — „
ՏԱՎԱՐԻ կաշին . . . . 7ր. 50 կ. 8 ր. „
Մարսելի Տանիէկս 39 ր. 50 „
„ Շէյսօն . 37 „ 50
ԲՈՒՐԴ.—Թուշի—վրայ . . . . սպառուած
„ Գանձակի . . 3 ր. 80 կ.—4 ր. „
„ Գնողներ չը կան
„ Ղազախի . . . . „ „
„ Շուշու . . . . . „ „
„ Ղարաբաղի . . . . „ „
„ Նուխու (գարնան) 3 ր. 90 կ.—4 ր.
„ „ „ Թոյլ
„ Խորասանի . . . 8 ր.—8 ր. 25 կ.

Մի փոքր առաջ բրդի դրութիւնը Մարսէյլից ստացուած հեռագիրների պատճառաւ լաւացել էր. բայց վերջին օրերում դարձեալ ընկաւ, որովհետև Մարսէյլում սկսուած պահանջները չը շարունակուեցան. այդ պատճառաւ և բրդի տէրերը այժմեան գներով չեն վաճառում Թիֆլիսում այլ իրենք են հակ կապում:

Բամբակ.—Երևանի Ամերիկ. սերմից պ. 7 ր.
„ „ . . . . 60 „
„ „ Գարադեօզի սերմ. „ 6 „ 70 „
ՄԱՆԱԾ . . . . „ 10 ր.
ԲՈԺՈԺ Նուխու . . . . „ —
„ Խմերեթի . . . . „ —
ԹԵԼ. —Կախեթի . . . .
ԼԱՍ (Փերդոն) . . . .
ԸՆԿՈՅԶԻ ՈՍՏՂ.—(Նադկիվ) դրութիւնը անփոփոխ

այս ապրանքը լաւ տեսակը հեշտութեամբ է վաճառվում, իսկ ստոր տեսակը միշտ մնում է անվաճառ:

ՈՍԿԻՆ —Պօլուիմպերիալը . . 8 ր. 12—13 կ.
„ Բաջախլուն . . . . . 5 „ 10 „
„ Տաճկաց լիրան . . . 8 „ 95 „
ԱՐԾԱԹ.—Րուբլիանոց . . 1 „ 35 „ — „
„ 20-կոպէկանոց . . . . 1 „ 15 „
ԹԻՖԼԻՍԻ առևտր. բանկի ակցիան 258—59 ր.
„ Քաղաքային „ „ 73 „
„ Ազնուականների կալուածական բանկի գրաւական տոմսը
(Закладной листъ) . . . . 82 „
ՔՈՒԹԱՅԻՍԻ բանկի նոյն տոմսը . . 87 „
ՏՈՄՍԵՐ.—Պետական բանկի 5%
1-ին . . . . . 99 „ 75 „
2—5-րդ . . . 98 „ 75—50 „
„ Արևել. փոխառութ. 5%
1-ին . . . . . 95 „ 87 „
2-րդ և 3-րդ . . 95 „ 75 „
„ Վիճակահանութեան 5%
1-ին շրջանի . . 224 ր. 75 „
2-րդ շրջանի . . 212 „ 25 „
ԹԷՅ.— Կ և Ս. (К. и С.) Պոպով եղբայց
1 ր. 40 կոպ—2 ր. 50-կոպէկանոցի համար գիրվ.
մինչև 300 ր. 6%.
300 — 500 - 9%.
500-ից աւել 12%.
„ Շուկայում մանուր
„ անձանց մօտ բոլոր տե-
„ սակների համար գիրվ. %12
ԾԽԱԽՈՏ.—Կուշնարևի.
Պապիրոս.
1-ն և 2-րդ տեսակի գիրվ. 23—24%
3-դ „ „ 9-10%
Թամբաքու
2 րուբլիանոցի գիրվ. 17%
1 ր. 20-կոպէկան. „ 16 „
„ 80 „ „ 11 „
„ 40 „ „ 8 „
„ Ամիրօվի
Պապիրոս.
1-ն և 2-դ տեսակի գիրվ 24%
3-դ „ „ 12%
Թամբաքու
2 րուբլիանոց „ 18%
1 ր. 20 կոպէկանոց „ 17 „
„ 80 „ „ 12 „
„ 40 „ „ 10 „
„ Բողարջեանցի
I և II տեսակ „ 25%
III „ „ 20%
ԿԱՐԵՇԿԱ.—Ծալինի . պուդը 6 ր. 20 „
„ քլթախոտ „ 5 ր. 50 կ.
„ Րիմարենկօի „ 7 „ 50—60

Առևտրի դրութիւնը դարձեալ նոյն է. այսինքն միշտ ընկած:

—

Օդեսայի բօրսան, Հոկտեմբերի 25-ին:
կուրսը երեք ամսական.
Լոնդոնի վերայ գնողք 9.68 վաճառողք 9.71 „
Մարսէյլի „ „ 261 „ 260 „
Վիեննայի „ „ 126 „ 125
Ոսկին Պօլուիմպերիալը —
„ Լիրան —
Շաքար. Բրօդսկի . . . . . 6 „ 40 „
„ Չերկեսկի . . . . . . 6—35 „
„ Գնիվան . . . . . . 6 „ 30 „
„ Մանրագլուխ (7 փնտ.). . 7 „ — „
„ Մանրագլուխ (8—9 փնտ.)
„ „ „ 6 ր. 70—75 „
„ կտրտած-Ռուլադովկա,
Անգուկներինը . . 6 ր. 40 „
Տակառներինը . . 6 „ 30 „
„ Շաքարաւազ . . . 5—20—17 1/2 „

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուտով մամուլի տակ կը մտնի
ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱՀԱՇՈՒԻ
(Ալջեբրայի)
միջնակարգ պարոցների համար,
մասն առաջին.
Գործ
Յարութիւն Տէր-Պետրոսեանցի, ուսուցչի Ալէքսանդրապօլու Վիճակային Հոգևոր Դպրոցի:
3—3

Այս օրերս մամուլի տակ է մըտնելու Ա. Ս. Պուշկինի „Կապիտանի դուստր" (Капитанская дочь) վերնագրով վէպի թարգմանութիւնը. ուստի խնդրում եմ այն յարգելի պարոններին, որոնք յանձն են առել թարգմանութեանս բաժանորդներ գտնելու ծանրութիւնը, շուտով մեզ հասցնեն թէ բաժանորդական թերթերը և թէ ստացած փողերը հետևեալ հասցէով. Въ г. Кубу, Священнику Аваку Авшарянцу.
3—2

ՅԱՅՏՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ
ՍԷՅԵԱԴԻ (Կապիտան Պետրոս Մագաթեանց) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ընտիր թղթի վերայ մաքուր տըպուած I, II և III մասերը միասին լոյս տեսաւ և արդէն վաճառվում է Բագվում իմ սեպհական տպարանում և Թիֆլիսի գրավաճառանոցներում. գինն է 1 ռ. 20 կ.:

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.—Въ Баку, въ Типографію Александра Гасабова.
30—14

Յայտնում ենք մեր շնորհակալութիւնը հետևեալ պարոններին, որոնք սեպտեմբերից սկսած նուիրեցին Զաքաթալայի հայոց դպրոցին զանազան գրքեր:

Պ. Պ. Զաք. Գրիգորեանից 2 հատ, Խ, Ռ. Տ. Շահ.-Սրաբեանցներից 23 հատ. մի քանիսից 1 հատ. Բ. Միրզայեանից 1 հատ. Մոսկուայի հայ ուսանողական ընկերութիւնից 2 հատ., Ատ. Միրզայեանից 1 հատ, Կ. Աֆրիկեանից 3 հատ, Կ. Ստեփանեանից 2 հատ, Թ. Ատ-ից 41 հատ:

Եւ խնդրում ենք պ. պ. թարգմանիչներին, հեղինակներին և կամ հրատարակիչներին կամ այլ անձանց, որ որքան կարող են օգնեն գրադարանին:

Հասցէն՝ Въ Армянское училище, Въ г. Закаталы.
Գրադարանապետ Թ. Ատոմեան.
3—3

ԿԻՏՐՈՆԱԻԿԴ և ՕՐԱՆԺԱԴ ՄՈՍԿՈՎԻՏ
ԿԵՕԼԵՐԻ
Կիտրոնի և փորթոգալի թանձրացրած հիւթը, այդ պտուղների կատարելապէս պահպանուած անուշահոտութեամբ, լիմոնադի, պաղպաղակի, ժելէի, պունշի և այլն համար,
Գաստրոններում. բոլոր դեղավաճառանոցներում և կօլօնիալ խանութներում:
(Ц. 1) 5—4

ՁԻՆԳԵՐ
ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԸՆԿ. ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ.

Օրերումս կը բացուի Երևանում Ամերիկեան «Զինգեր» ընկերութեան մի բաժանմունք, ուրեղ կը ծախուին Զինգերեան ամենատեսակ կարեմեքենաներ: Գնողների դիւրութեան համար նշանակուած է վճարը հատուցանել մաս մաս, այսինքն սկսեալ շաբաթական 1ր 50կ: և աւելի: Երևանի բաժանմունքի գործակալութիւնը յանձնուած կը լինի պ. Յովհաննէս Մխիթարեանցին.

Գ. Նեյդլինգեր.
Թիֆլիս, Գոլովինի պրոսպեկտ, տուն Միրիմանովի.
5—3

„MESSAGERIES MARITIMES"
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Այսու պատիւ ունի յայտարարելու, որ նրա շոգենաւերը ճանապարհ են ընկնում ամեն մի 14 օրից յետոյ, երեքշաբթի օրերը. Տրապիզոն, Կերասուն, Սամսուն, Ինեպոլ, Կ. Պօլիս, Զմիւռնիա և Մարսէյլ: Ճանապարհորդական տոմսակները և նաւավարձի համար տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ Բաթումում, պ. պ. Էլլերս, Բուրկ հարդ և ընկ. կանտօրայում: Առաջին շոգենաւը դուրս է գնում ներկայ թուի նոյեմբերի 13-ին:
5—1

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1885 годъ
на ежедневную литературно-политическую газету
„НОВОЕ ОБОЗРѢНІЕ"
издаваемую ВЪ ТИФЛИСѢ
II ГОДЪ ИЗДАНІЯ.

ПРОГРАММА газеты общая всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ, съ возможно широкимъ развитіемъ мѣстнаго отдѣла.

Подписная цѣна съ доставкою и пересылкою въ Россіи: на годъ 10 руб., на полгода 6 руб., на 3 мѣсяца 3 руб. 50 коп., на одинъ мѣсяцъ 1 руб. 50 коп.

Подписка принимается: въ **Тифлисѣ** въ конторѣ редакціи при **Газетномъ Агентствѣ В. ШАВЕРДОВА**, въ С.-Петербургѣ въ книжномъ магазинѣ „**Новаго Времени**". Иногородные адресуютъ свои требованія въ **Тифлисъ**, въ контору редакціи „Новаго Обозрѣнія", при газетномъ Агентствѣ В. Шавердова.

Редакторъ-издатель А. В. Степановъ.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՀԵՍՏ
Փ. Պ. ՐՕԴՕԿԱՆԱԿԻ
Օդեսայի առևտրական տուն

Արդիւնաբերում և վաճառում է Օդեսայի և Սևաստոպօլի իւր սեփական գործարաններից շոգեշարժ աղօրիքներից. ԱԼԻՒՐ, Պերլովի Կրուպա, շաքար. զանազան տեսակ խղեր և գոյներ. Թել, մետաքս և կտաւ, նոյնպէս և պադօշ-Սևաստոպօլի Կաշիի գործարանից.

Գործակալութիւնը գտնվում է Դվորցովի փողոցի վերայ, նախկին Արծրունիքարվանսարայում, № 108
10—9

ՆՈՐ ՊԱՀԵՍՏԻ ԲԱՑՈՒՄՆ
ՀԱՑԻ ՍՊԻՐՏԻ
ԵՒ
ԶՏԱԾ ՕՂԻՆԵՐԻ.

Վլադիկավկազեան Սվետօ-Տրօիցկի առհմական պատուաւոր քաղաքացի Իվան Ադամովիչ Պօրտկովի և Դաւիթ Զախարովիչ Սարաջևովի ցքահանութեան գործարանի գրասենեակը այսու յայտարարում է, որ հոկտեմբեր ամսի 1-ից բացուած է Թիֆլիսում, Թամամշովի քարվանսարայում, Երևանեան հրապարակի վերայ, Ալէլմի գրասենեակի շարքում, Հացի սպիրտի և զտած օղիների պահ տես:

Պահեստում կան մեծ քանակութեամբ Հացի սպիրտ. սուրճից, լեկեօրից և պարզ ալկոհոլից, նոյնպէս և օղիներ՝ զտած, ճաշի համար, մաքրած և թագաւորական կոչուած բարձր յատկութեան:

Յիշեալ պահեստի սպիրտի և զտած օղիների մանրավաճառը լինում է Թիֆլիսում հետևեալ խանութներում.—Ցակօբովի, Գօլովինսկի պրօսպէկտի վերայ, Մուխրանսկիւ տանը, Միրզախանովի, Երևանեան հրապարակի վերայ, Իզմիրովի տանը, և Շաքիևի, Սօլօլակում, Սմբատովի տանը, 1 վեդրանոց, 1/2 վեդ., 1/4 վեդ., 1/10 վեդ., 1/16 վեդ., 1/20 վեդ., 1/40 վեդրանոց ամանեներում, պահեստի եարլիկով և կնիքով: «Մարկայ». «Վլադիկավկազեան Սվետօ-Տրօիցկի ցքահանութեան գործարան, Թիֆլիսի պահեստից»: Նոյն տեղերում մանրավաճառ կլինի մինչև 3 վեդրօ 1, 1/2 և 1/4 վեդրանոց ամանեներում, պահեստի գնով: Գները չափաւոր են. սպիրտի և օղիների պատուէրները պահեստը ինքն է հասցնում հասցէին:

Օտարաքաղաքացիք իրենց պահանջներով դիմում են հետևեալ հասցէով. Թիֆլիս, Իվ. Ադ. Պօրտկովի և Դաւ. Զախ. Սարաջևովի Հացի սպիրտի պահեստը, Երևանեան հրապարակի վերայ:
10—9.

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го Ноября 1884 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 12